

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

պատմության ամբիոնի անվանումը
Ամբիոնի վարիչ Ֆ.Վ.Մովսիսյան /Ա.Ա.Հ/
Արձանագրություն № 2
« 13 » սեպտեմբերի, 2023 թ.

Պ/Բ-001- ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ -1

Դասիչ, դասընթացի անվանում

ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն`	<u>022201.00.6 Պատմություն</u> <small>/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/</small>
Կրթական ծրագիր`	<u>022201.01.6 Պատմություն</u> <small>/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/</small>
Որակավորման աստիճան`	<u>բակալավր</u> <small>/բակլավր, մագիստրատուրա/</small>
Ամբիոն`	<u>պատմության</u> <small>/ամբիոնի լրիվ անվանումը/</small>
Ուսուցման ձևը`	<u>առկա /հեռակա/</u> <small>/առկա, հեռակա/</small>
Կուրս/կիսամյակ	առկա <u>առաջին, առաջին կիսամյակ</u> հեռակա _____
Դասախոս(ներ)`	Արթուր Մելիքյան _____ <small>/անուն, ազգանուն/</small>

Էլ. հասցե arthurmelikyan@rambler.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ.....
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.....
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ.....
 - 12.1 Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
 - 12.2 Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ.....
 - 12.3 Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ.....
 - 12.4 Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում.....
14. Գնահատում.....
 - 14.1 Ուսանողների գիտելիքների ստուգում.....
 - 14.2 Հարցաշար
 - 14.3 Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում¹.

«Հայոց պատմություն 1» դասընթացը կարևորվում է պատմագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 022201.01.6-Պատմություն կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում: «Հայոց պատմություն 1» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրի հիմնական կրթական ծրագրով, ՎՊՀ – ում բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչներով կազմված ուսումնական պլաններին համապատասխան: «Հայոց պատմություն-1» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը, ուսումնական գործընթացը ուսումնամեթոդական նյութերով, նորարարական մեթոդներով ապահովմանը: «Հայոց պատմություն-1» -ով նախատեսվող ուսումնական նյութն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհում հնագույն պետականությունների առաջացումից մինչև Արտաշեսյան արքայատան մարումը՝ Ք.ա. 3-րդ հազարամյակից մինչև Ք.հ. 1 թ.:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է.

- Բազմակողմանի պատկերացումներ տալ Հայ ժողովրդի ձևավորման, նրա բազմադարյան պատմության հնագույն և հին դարաշրջանների քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային զարգացման ինքնատիպ ընթացքի, հարևան երկրների ու ժողովուրդների հետ նրա բազմաբնույթ փոխհարաբերությունների մասին:
- Տեսական գիտելիքներ տալ Հայկական լեռնաշխարհում ձևավորված հնագույն պետական կազմավորումների քաղաքական պատմության, նրանց ժառանգական կապի, կառավարման համակարգերի մասին:
- Համակարգված պատկերացում տալ Պատմական Հայաստանի հնագույն և հին դարաշրջանների հասարակական կյանքի՝ էթնոքաղաքական տեղաշարժերի, հասարակության էթնիկ, ենթաէթնիկ և դասային կազմի, տարբեր դարաշրջաններում դրսևորված սոցիո-մշակութային գործընթացների մասին:
- Ձևավորել Հայոց պատմական ընձեռնած տվյալները համակարգելու, տեսական վերլուծության ենթարկելու, սեփական դիրքորոշումը փաստարկելու և ինքնուրույն հետևություններ անելու կարողություն:

2.2. Դասընթացի խնդիրներն են.

¹ Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթարվիների

- Սովորեցնել Հայոց պատմության հնագույն և հին շրջանների տեսական հիմքերը:
- Բացատրել Պատմական Հայաստանի տարածքում պետական կազմավորումների ձևավորման, զարգացման և անկման օրինաչափությունները:
- Ձևավորել հայագիտական նյութի հետ աշխատելու և ձեռք բերված ինֆորմացիայի տարբեր ձևերը օգտագործելու, տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման ունակություն, տեղեկույթը կառավարելու, իր դիրքորոշումը փաստարկելու և ինքնուրույն հետևություններ անելու կարողություններ,
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

«Հայոց պատմություն 1» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը 022201.01.6 - «Պատմություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «Հայաստանի պատմական աշխարհագրություն» «Հին Արևելքի պատմություն» դասընթացներից:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը² և /կամ կոմպետենցիաները.

«Հաստատանի պատմական աշխարհագրություն» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա Հայաստանի պատմական աշխարհագրության տեսական հիմունքները,
2. իմանա Հայոց պատմության ուսումնասիրման մեթոդական հիմքերը,
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ պատմական իրողությունները հասկանալու, փաստերն ու երևույթները համեմատելու, պատմական տարբեր դարաշրջաններում գոյություն ունեցած վարչա-քաղաքական միավորների զարգացման փուլերն ու դրանց օրինաչափությունները համադրելու և համակողմանի գնահատելու, վերլուծելու, դիրքորոշումներ ձևակերպելու համար,
4. կարողանա համադրել հնագույն և հին դարաշրջանների Հայոց պետականությունների վարչաքաղաքական փորձ, վեր հանել դրանց ժառանգորդության և մշակութային ընդհանրության հարատման պատճառներն ու առանձնահատկությունները,

² <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

5. կարողանա համակարգել Հայոց պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքները, դրանք ենթարկել տեսական վերլուծության, փաստարկել սեփական դիրքորոշումը և կատարել ինքնուրույն հետևություններ,
6. կարողանա վերլուծել օտար տիրապետությունների ընթացքում Հայաստանի վարչական համակարգերի վերափոխությունների ընթացքը, ժողովրդագրական պատկերի փոփոխությունները,
7. կարողանա ձևավորել դիրքորոշումներ հնագույն և հին շրջանի Հայոց պատմության հիմնախնդիրների նկատմամբ և կատարել դրանց հետազոտություն:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա) Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,

ԳԿ9 խնդիրների լուծում,

ԳԿ10 որոշումների ընդունում:

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,

ՀԳԿ3 սովորելու ունակություն,

ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

Բ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,

ԱԿ11 տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

ԱԿ14 տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների³.

«Հայոց պատմություն 1» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել պատմաբանի, պատմության ուսուցչի մասնագիտական գործունեության ընթացքում, էքսկուրսավարի աշխատանքում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

³ Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	5 կրեդիտ/ 150 ժամ	

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակ	Ժամաքանակ
Դասախոսություն	50	10
Գործնական աշխատանք		
Սեմինար պարապմունք	20	6
Լաբորատոր աշխատանք		
Ինքնուրույն աշխատանք	80	
Ընդամենը	150	
Ստուգման ձևը՝ քննություն		

7. Ուսումնական աշխատանքների տեսակները⁴ .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների,

⁴ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդալուծիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են⁵

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Կրթ սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:

⁵ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաձանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** – կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տեսք** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Ձեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հասուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝⁶** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր և այլք:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝⁷** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում....

⁶ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁷ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների⁸.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարամլուներ	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների ու Միջագետքի տերությունների հարաբերությունները Ք.ա. 3-րդ հազարամյակում	6				4
2.	Ռազմաքաղաքական փոխհարաբերությունները Հայասսայի և Խեթական տերության միջև Ք.ա. 14-13-րդ դդ.	4				4
3.	Հայասսայի պետական կարգը		2			4
4.	Փոյուզիական գործունը հայ ժողովրդի ազգածագման մեջ	2				4
5.	Ուրուատրի-Նաիրի համադաշնությունը Ք.ա. 13-րդ դ. առաջին կեսին	2				4
6.	Ուրարտու պետության առաջացումն ու ընդարձակումը Ք.ա. 9-8-րդ դդ.	4				4
7.	Ուրարտական պետության թուլացումն ու անկումը	4				4
8.	Հայ ժողովրդի էթնոգենեզիսի մեջ մելիդ-թաբայյան գործունի դերը	2				4
9.	Մելիդ-Թեգարաման Ք.ա. 12-8-րդ դդ.	2				4
10.	Ուրարտուի պետական և հասարակական կարգերը		2			4
11.	Ուրարտուի մշակույթը		4			4
12.	Հայկագունի հարստության հաստատումը Հայաստանում և հայ-մարական	2				4

⁸ Նման է օրացուցային պլանին

	փոխհարաբերությունները Ք.ա. 7-6-րդ դդ.					
13.	Հայաստանն Աքեմենյանների տիրապետության ներքո	4				4
14.	Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունները Ք.ա. 331 թ. մինչև Ք.ա. 3-րդ դ. վերջերը	2				4
15.	Ծոփք-Կոմմագենյան միացյալ թագավորությունը	2				4
16.	Մեծ Հայքի թագավորությունը Ք.ա. 4-րդ դ.	2				4
17.	Հայկական թագավորություններն ու Սելևկյան տերությունը Ք.ա. 3-2-րդ դդ սկզբներին	2				4
18.	Մեծ Հայքի թագավորությունը Արտաշես 1-ի ու նրա անմիջական հաջորդների օրոք	4				2
19.	Մեծ Հայքի քաղաքական վերելք Տիգրան 2-րդի օրոք. Հայոց աշխարհակալությունը		4			2
20.	Հայ-Հռոմեական հարաբերությունները Ք.ա. 1-ին դ. սկզբներից մինչև Ք.ա. 66 թ	4				2
21.	Հայ-հռոմեական և հայ-պարթևական հարաբերությունները Ք.ա. 1-ին դ. երկրորդ կեսին	4				2
22.	Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի պետական կարգն ու կառավարման համակարգը		4			2
23.	Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի մշակույթը		4			2
24.	ԸՆԴԱՄԵՆԸ	50	20			80

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

h/h	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Մովսիսյան Ա., Հայաստանը Մ.թ.ա. Երրորդ հազարամյակում	Երևան, 2005
2.	Մովսիսյան Ա., Սրբազան լեռնաշխարհը: Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, 2–րդ հրտ.,	Երևան, 2004,
3.	Քոսյան Ա., Ղազարյան Ռ. և ուր. , Մ.թ.ա. XV դ. իտեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին,	Երևան, 2018
4.	Քոսյան Ա., Մ.թ.ա. XIV դարի իտեթ-հայասական միջպետական պայմանագրերը,	Երևան, 2016
5.	Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը	Երևան, 2013
6.	Ղազարյան Ռ., Հայաստ. Քաղաքական և մշակութային պատմությունը	Երևան, 2009
7.	Խաչատրյան Վ., Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում	Երևան, 2012
8.	Խաչատրյան Վ., Հայկական հնագույն տեղանունները	Երևան, 2018
9.	Г. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960	Москва 1960
10.	Գրեկյան Ե. Հ., Բիայնիլի Ուրարտու Պետություն և հասարակություն, Երևան, 2016	Երևան, 2016
11.	Ցականյան Ռ. Ա., Զանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը Ասորեստանում և Վանի Թագավորությունում (Ք.Ա. VIII-VII դդ.), ՄՄԱԵԺ, Հ. 29,	Երևան, 2014
12.	Ցականյան Ռ. Ա., Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արեւելքում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VII-VI դդ.,	Երևան, 2018
13.	Խաչատրյան Վ., Հայոց հին պատմության հարցեր (Ակնարկներ հայոց հին պատմության)	Երևան, 2010
14.	Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում /պատմաաշխարհագրական ուսումնասիրություն/	Երևան, 2014
15.	Հայկագունիներ, խմբագր. Վ. Բարխուդարյանի	Երևան, 2013
16.	Կրկյաշարյան Ս. Մ., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (Մ.թ.ա VI-մ.թ. IV դդ.)	Երևան, 2005
17.	Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա	Երևան, 1977
18.	Տիրացյան Գ., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI- մ.թ.ա. III դ. վերջը), տե'ս Հայկագունիներ, էջ 463 – 482 :	Երևան, 2013,

19.	Էլշիբեկյան Ժ. Գ., Հայաստանը և Մելևկյանները,	Երևան 1979:
20.	Մարգարյան Ե., Հելլենիստական դարաշրջանի Կոմմագենեի և Շոփքի պատմությունից, Լրաբեր հասարական գիտությունների, թիվ 1, 2009, էջ 20 - 32:	Երևան 2009
21.	Երեմյան Ս. Հայաստանն ըստ «Աշխարհացոյցի»,	Երևան, 1963
22.	Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի»,	Երևան, 2001
23.	Ադոնց Ն., Հայաստանի պատմություն	Երևան, 1972
24.	Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ Մ.թ.ա. VII-VI դդ..	Երևան, 1998
25.	Տիգրան Մեծ, իմբագ. Է. Լ. Դանիելյան	Երևան, 2011
26.	Ստեփանյան Ա., Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, գիրք Ա	Երևան, 2012
27.	Մանասերյան Ռ., Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ	Երևան, 1997
28.	Marciak M., Sophene, Gordyene, and Adiabene Three Regna Minora of Northern Mesopotamia Between East and West, Impact of Empire, Vol. 26,	Leiden, Boston 2017
29.	Bainili-Urartu, The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007 Tagungsbericht des Münchner Symposiums 12.-14. Oktober 2007, Edited by S. KROLL, C. GRUBER, U. HELLWAG, M. ROAF & P. ZIMANSKY	Peeters, 2012
30.	Petrosyan A., Problems of Armenian Prehistory: Myut, Language, History	Yerevan, 2015
31.	Քոսյան Ա., Ինտեգրացիոն գործընթացները եփրատյան կոնտակտային գոտում մ.թ.ա. 2-1-ին հազարամյակներում, Տես Արևելագիտությունը Հայաստանում, հատ. 3-րդ, էջ 200-2012	Երևան, 2017
32.	Քոսյան Ա. Տուն Թորգոմայ	Երևան, 1998
33.	Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ	Երևան, 1987
34.	Քոսյան Ա., Մ.թ.ա.XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը.	Երևան, 1999
35.	Ներսեսեան Ե., Շոփքի հայ թագաւորութեան դրամները (Շուրջ 260-էն- 70 թթ), Arm. Num. Soc.	
36.	Սարգսյան Գ., Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին,	Երևան 1962
	Լրացուցիչ գրականություն(ԼԳ)	
1.	Հայ ժողովրդի պատմություն ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1	Երևան, 1971
2.	Սարգսյան Գ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանն ու Մովսես Խորենացին,	Երևան, 1966
3.	Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն,	Երևան, 1968

4.	Ղափանցյան Գ. Ա., Ուրարտուի պատմություն,	Երևան, 1940
5.	Առաքելյան Բ., Ուրարտուն և հայ ժողովրդի կազմավորումը. Ուրարտու-Հայաստան	Երևան, 1988
6.	Дибвойз Н. К., Политическая история Парфии	Санкт-Петербург, 2008
7.	Քսենոփոն, Անաբասիս	Երևան, 1970
8.	Արրիանոս, Ալեքսանդրի արշավանքը	Երևան, 1987
9.	Тит Ливий, История Рима от основания города, том 1-3,	М., 1989-1991
10.	Плутарх, Избранные жизнеописания, том 1-2	М., 1990
	Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)	

14 Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

11.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Գրականություն ⁹
1.	Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների և Միջագետքի տերությունների հարաբերությունները Ք.ա. 3-րդ հազարամյակում	Հայկական լեռնաշխարհը հնդեվրոպական նախահայրենիք: Կուր-արքսյան մշակութային ընդհանրությունն ու նրա հենքի վրա առաջացած Արատա պետականությունը: Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները Ք.ա. 3-րդ հազարամյակում: n	6	ՊԳ. 1,2 ԼԳ 1
2.	Ռազմաքաղաքական փոխհարաբերությունները Հայաստանի և Խեթական տերության միջև Ք.ա. 14-12-րդ դդ.	Հայասա պետականության առաջացման և տարածքի խնդիրը, հայասա-խեթական հարաբերությունները Ք.ա. 14-12-րդ դդ:	4	ՀԳ. 3,4, 5, 6, 7, 8, 30, 34, ԼԳ 1

⁹ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, որ.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

3.	Փոյուզիական գործունը հայ ժողովրդի ազգաձագման մեջ	Ք.ա. 2-րդ հազարամյակում Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածաժառանգում կատարված էթնոքաղաքական տեղաշարժերը, փոյուզիական գաղթը և հայոց էթնոգենեզիսի մեջ փոյուզիական գործունի մասնակի դերակատարության հարցը:	2	ՊԳ 3,4, 5, 6, 7, 8, 30. 34, ԼԳ 1
4.	Ուրուատրի-Նաիրի համադաշնությունը Ք.ա. 13-րդ դ. առաջին կեսին	Քաղաքական համախմբման գործընթացը Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում և Ուրուատրի Նաիրյան համադաշնության ձևավորումը: Նաիրիձատրեստանյան հարաբերությունները Ք.ա. 13-12-րդ դդ.	2	ՊԳ 7, 8, 9, 10, 11, 12, 13, 23, 30, ԼԳ 3, 4, 5
5.	Ուրարտու պետության առաջացումն ու ընդարձակումը Ք.ա. 9-8-րդ դդ.	Ուրարտական պետության կազմավորումն ու ընդարձակումը: Նրա վերաճելը աշխարհակալ տերության: Ուրարտու-ատրեստանյան ռազմաքաղաքական հարաբերությունների ընթացքը Ք.ա. 9-8-րդ դդ.	4	ՊԳ 7, 8, 9, 10, 11, 12, 13, 23, 30, ԼԳ 3, 4, 5
6.	Ուրարտական պետության թուլացումն ու անկումը	Ուրարտուի պարտությունը Ատրեստանի հետ հակամարտությունում, արտաքին գործունների ազդեցությունը նրա հետագա թուլացման գործում: Ուրարտա-ատրեստանյան և ուրարտա-թաբայան հարաբերությունները Ք.ա. 7-րդ դ. Ուրարտուի անկման տեսությունները	4	ՊԳ 7, 8, 9, 10, 11, 12, 13, 23, 30, ԼԳ 1, 3, 4, 5
7.	Հայ ժողովրդի էթնոգենեզիսի մեջ մելիդ-թաբայան գործունի դերը	Հայաստանը նախարարապետության դարաշրջանում:	2	ՊԳ 11, 12, 31, 32, 34
8.	Մելիդ-Թեգարաման Ք.ա. 12-8-րդ դդ.	Թաբայան ռազմաքաղաքական գործունի ձևավորումը, նրա էթնիկ բովանդակությունը, թաբայա-ատրեստանյան հարաբերությունները Ք.ա. 9-8-րդ դդ: Թաբայի ընդարձակումը դեպի մերձեփրատյան շրջան:	2	ՊԳ 11, 12, 31, 32
9.	Հայկազունի հարստության հաստատումը Հայաստանում և հայ-մարական փոխհարաբերությունները Ք.ա. 7-	Թաբայի ներթափանցումը Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններ և հայկական իշխանության հաստատումը: Հայկազունիների մասնակցությունը Ք.ա. 7-րդ դ. վերջերին Ատրեստանի անկման գործընթացին,	2	ՊԳ 12, 13, 14, 15, 16, 17, 18, 24, 34, ԼԳ 1

	6-րդ դդ.	հայ-մարական հարաբերությունները Ք.ա. 7-6-րդ դդ. և Հայկագունիների իշխանության տարածումը Հայկական լեռնաշխարհում:		
10.	Հայաստանն Աքեմենյանների տիրապետության ներքո	Հայաստանում Աքեմենյան տիրապետության հաստատումը, հայերի Ք.ա. 521 թ. հակադարեհյան ելույթը, Հայաստանի վերածումը 13-րդ սատրապության, նրա սահմանները, կառավարման համակարգը, տնտեսական դրությունը:	4	ՊԳ 12, 14, 24, ԼԳ 1, 3
11.	Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունները Ք.ա. 331 թ. մինչև Ք.ա. 3-րդ դ. վերջերը	Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունների ձևավորումը, նրանց տարածքը, կառավարման համակարգը, հարաբերությունները հարևան հելլենիստական երկրների հետ	2	ՊԳ 15, 16, 17, 18, 19, 20, 25, 28, ԼԳ 1, 2, 3
12.	Ծովք-Կոմմագենյան միացյալ թագավորությունը	Ծովք-Կոմմագենի միացյալ թագավորության առաջացման պատճառները, նրա տարածքը, բնակչությունը, հարաբերությունները Սելևկյան տերության հետ, մշակութային կյանքը, քաղաքաշինությունը	2	ՊԳ 15, 16, 17, 18, 19, 20, 28, ԼԳ 1, 2, 3
13.	Մեծ Հայքի թագավորությունը Ք.ա. 4-րդ դ. վերջին 3-րդ դ. առաջին քառորդին	Մեծ Հայքի թագավորության ժամանակավոր հպատակեցումը Սելևկյանների կողմից, Երվանտունիների արքայատան հակասելևկյան քաղաքակրթության հաջողությունը Ք.ա. 3-րդ դ. առաջին քառորդին	2	ՊԳ 15, 16, 17, 18, 19, 20, 28, ԼԳ 1, 2, 3
14.	Հայկական թագավորություններն ու Սելևկյան տերությունը Ք.ա. 3-դ. երկրորդ կեսից մինչև 2-րդ դդ սկզբները	Հայկական թագավորությունների և Սելևկյան տերության հարաբերությունները Ք.ա. 3-րդ դ. երկրորդ կեսին, Փոքր Հայքի, Կոմմագենի, Մեծ Հայքի ու Ծովքի ժամանակավոր հպատակեցումը Անտիոքոս 3-րդի կողմից	2	ՊԳ 15, 16, 17, 18, 19, 20, 28, ԼԳ 1, 2, 3
15.	Մեծ Հայքի թագավորությունը Արտաշես 1-ի ու նրա անմիջական	Ք.ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտն ու հայկական թագավորությունների անկախության վերականգնումը: Արտաշեսյան արքայատոհմի	4	ՊԳ 15, 16, 17, 18, 19, 20, 25, 26, 28, ԼԳ 1, 2, 3

	հաջորդների օրոք	հաստատումը Մեծ Հայքում, Արտաշես 1-ի միավորիչ գործունեությունն ու ներքին բարեփոխումները: Մեծ Հայքը Արտաշես 1-ի անմիջական հաջորդների օրոք:		
16.	Հայ-Հռոմեական հարաբերությունները Ք.ա. 1-ին դ. սկզբներից մինչև Ք.ա. 66 թ	Տիգրանի Կապպադովկիա ներխուժումն իբրև հայ-հռոմեական պատերազմի պատճառ: Հայ-պհռոմեական պատերազմի ընթացքը, Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերը, Ք.ա. 66 թ. Արտաշատի պայմանագիրը. Հայոց արքան Հռոմեական ժողովրդի «բարեկամ»:	4	ՊԳ 19, 25, 28, 33, ԼԳ. 1, 2, 3
17.	Հայ-հռոմեական և հայ-պարթևական հարաբերությունները Ք.ա. 1-ին դ. երկրորդ կեսին	Մեծ Հայքի թագավորության արտաքին քաղաքական դրության վատացումը Արտավազդ 2-րդի և նրա հաջորդների օրոք: Կրասոսի և Անտոնինոսի արշավանքները և Հայաստանը: Հռոմի միջամտությունները Մեծ Հայքի գահաժառանգության հարցերին: Օգոստոսը և Արտաշեսյանները: Արտաշեսյան արքայատան վախճանը:	4	ՊԳ 17, 25, 27, ԼԳ 6
			50	

15.2 Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Մտուզման ձևը	Գրականություն ¹⁰
1.	Հայասայի պետական կարգը	Հայասայի տարածքը, նրա բնույթը, պետական կառուցվածքը, արքայական շխանությունը, ավագների խորհուրդը, Հայասայի բանակը	2	Բանավոր հարցում և թեստային աշխ.	Հ.Գ. 3, 4, 5, 6, ԼԳ 1
2.	Ուրարտուի պետական և հասարակական կարգերը	Ուրարտական պետության պետական կառուցվածքը, արքայական շխանությունը, արքունիքը, երկրային իշխանությունները, դաշնային բնույթի վերացումը և պետության կենտրոնացումը, մարզային իշխանությունները, Ուրարտուի բանակի կառուցվածքն ու դեկավարումը	2	Բանավոր հարցում և թեստային աշխ.	ՀԳ. 9, 10, 11, 12, 29, ԼԳ 1, 4, 5
3.	Ուրարտուի մշակույթը	Ուրարտական մշակույթի բնույթը, կրոնը, արվեստը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, գրության համակարգը	4	Բանավոր հարցում և թեստային աշխ.	ՊԳ 9, 10, 13, 29, 30, ԼԳ 1, 4, 5
4.	Մեծ Հայքի քաղաքական վերելք Տիգրան 2-րդի օրոք. Հայոց աշխարհակալությունը	Տիգրան 2-րդի գահակալությունը: Ծովքի վերամիավորումը, Կորդուքի, Վիրքի, Աղվանքի հպատակեցումը, Տիգրանի դաշինքը Միհրդատ 6-րդի հետ: Տիգրանի պատերազմը Պարթևստանի դեմ և նրա տերության ընդարձակումը, Տիգրանը և Մելևկյանները: Տիգրան 2-ի տերության սահմանները, կառավարման համակարգը, բնակչությունը, Տիգրանակերտ մայրաքաղաքի կառուցումը:	4	Բանավոր հարցում և թեստային աշխ.	ՊԳ. 16, 17, 19, 25, 26, 33, ԼԳ. 1, 2, 3
5.	Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի պետական կարգն ու կառավարման համակարգը	Հայկական պետությունների պետական կառուցվածքը, արքայական շխանությունը, քաղաքական կրոնը, արքունիքը, կառավարման համակարգը, տոհմիկ և ծառայող	4	Բանավոր հարցում և թեստային աշխ.	ՊԳ. 15, 16, 17, 19, 20, 25, 26, 27, 35, 36, ԼԳ 1, 2

¹⁰ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

		ազնվականությունը, բանակի կառուցվածքն ու ղեկավարումը			
6.	Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի մշակույթը	Հայաստանի հելլենիստական մշակույթի ձևավորման նախադրյալները, բնույթը, զարգացման հիմնական փուլերը, կրոնական սինկրետիզմը, արվեստը, քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, դրամահատությունը, գրության համակարգը	4	Բանավոր հարցում և թեստային աշխ.	ՊԳ. 15, 16, 17, 19, 20, 25, 26, 27, 35, 36, ԼԳ 1, 2
7.			20		

12.1. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

11.2. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Աշխատանքի տեսակը ¹¹	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն ¹²
